յիսի Իէ էր։ Եւ է ի դուրս կալն մեր՝ ի գնալն և ի մնալն և ի գալն՝ Ժ ամիս Ե օր պակաս։

Սեպտեմբերի ԺԴ նաւակատիք[1]) սուրբ Խաչին։ Եկն մահտեսի հայր մեր ի Սուրբ Կարապետայ. և աբարեալ զսուրբ Խաչն, և Վարագայ սուրբ Խաչի պահոցն ի գիւղն գնացաք, որ է ի հանդէպ յԻզնիմիտոյ։ Եւ մեք որ յերուսաղէմ էաք՝ ամսոյ Նոյեմբերի ԻԲ Մուրատ փաշան երրորդ անգամ արար պատրիարք զԴաւիթ եպիսկոպոսն, զոր աքսորեալ էին ի Կիպրոս. անտի եբեր և արար։

Եւ Յունվարի ամսոյ, որ եղև թվական ՌՂԹ (*), Մուրատ փաշան զքիւրէքճոյ ըստակն ոչ ետ, այլ ՃԾ Հոռմին և ՃԾ Հրէին և ՃԻԵ մեր էարկ, և ոչ տվին ի պէկլիկէն ըստակ, այլ ԴՌ ըստակ մարդ գլուխ քիւրէքճուն տվին եկեղեցի ըստ չափու խուրեանց(**)։ Եւ յորժամ եկաք Մայիսի, դեռ ևս վէզիր էր Մուրատ փաշան և պատրիարք Դաւիթն էր։ Եւ Յուլիսի ԻԶ Զչի աւուր զՄուրատ փաշան մանզուլ արարին և ետուն զՊուտիմ ի պէկլէրպէկութեան. և եղին վէզիր զՄէլէկ Ահմէտ փաշայ, այր Ղայայ սուլթանին՝ դստեր սուլթան Մուրատին։

ՅՕգոստոսի Ժ յաւուր Կիրակէի մանզուլ արարին զԴաւիթ եպիսկոպոսն ի պատրիարքութենէ, և ամենայն պարտօքն առին Զ եկեղեցոյ իշխանքն և բազում լինէր պարտքն եկեղեցեացն՝ ԽԻ զուռուշ (Ռեալ)։

1) նաւակատիկ.

(*) Լուս. մեք յերուսաղէմ էաք։

(**) Լուս. զայս յառաջ գրէ՝ թէ խաղաղ ժամանակ էր։